

# ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ



396(47)

Ա-95

ԱՀԱՅ ԺԱՌՈՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԵՆՅՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՈՍԿՎԱ.

1930


96(47)

-95

120-1

Ա. ԱՐՏՅՈՒՐԻՆ

ԵՎԵԼ ՏԵՍ



631144.3

ԳԵՂՋԿՈՒՅԹՆ

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԱՌՈՎԿԱ

1930



ՀՀ-2144.3

31-081

56.261

23 FEB 2013

ԳԵՂՋԿՈՒՅՈՒ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե  
ՈԴՏԱԳՈՐԾԵԼ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՅԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Կոմունիստական կուսակցության 15-րդ համագումարը Խորհրդային Միության բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների առաջ դրեց մեծ կարևորություն ունեցող խնդիրներ—այն երերկիրը ինդուստրացման յենթարկել, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործը պլում բերել:

Հենվելով միլիոնավոր աշխատավոր մասսաների ամենալայն ակտիվության ու մեծ վոգեվորության վրա, կոմունիստական կուսակցությունը լայն քրոնական հարձակում ծավալեց մեր յերկրի կապիտալիստական բոլոր մնացորդների վրա և սոցիալիզմի կառուցման գործում մեծառույն նվաճումներ ունեցավ:


Հնդամյա պլանի առաջին տարին վոչ միայն հաջող ե ավարտվել, այլ և արտադրութան կարելոր մասերում նախատեսնված պլանից ել անցել է Այդ տարին վճռական բեկում առաջացավ

Главлит А-5938

Заказ № 499

Тираж 5000

Кн. ф-ка ЦИЗа Народов ССР. Москва, Шлюзовый пр., 6.



Կ 34 85-63

գյուղացիական լայն մասսաների մեջ դեպի կոլեկտիվացման գործը՝ Վորակս հեղեղ՝ կոլեկտիվ մտան վոչ միայն չքավորությունը, բատրակությունը, այլ և միջակները։ Զգտումը դեպի կոլխոզ այնքան ուժեղ է, վոր նա վերացնում է մեր բոլոր յենթադրությունները, մեր բոլոր պլանները։

Այդ մեծագույն հաջողությունները ձեռք են բերվել շնորհիվ կուսակցության ճիշտ քաղաքականության և նրա լենինյան կենտկոմի։ Նրանք ստացվել են դասակարգային համառ պայքարում և կուսակցության իր իսկ շարքերում գլխավոր գծից շեղվող բոլոր թեքումներին անհաշտ վերաբերմունք ցույց տալու շնորհիվ։

Այդ հաջողությունները հնարավոր դարձան շնորհիվ աշխատավոր լայն մասսաների ակտիվության, շնորհիվ նրա, վոր շարժման մեջ մտան միլիոններ։ Սակայն ձեռք բերված մեծ հաջողությունները չպետք է մեզ շնորհնեն։ Այս խնդիրը—ամենակարճ ժամանակամիջոցում վերջացնել կոլեկտիվացման գործը—պահանջում է ամբողջ բանվոր դասակարգից, գյուղական չքավորությունից ու բատրակությունից ուժերի ավելի մեծ լարում, ուժերի լարում և պահանջում նաև միջակների լայն մասսաների կողմից։

Միմիայն ամբողջ բանվոր դասակարգի, ամբողջ աշխատավոր գյուղացիության ուժերը

մոքիլիզացիայի յենթարկելով՝ մենք կլուծենք մեր առաջ դրված խնդիրներն այնքան արագ, վորքան վոր մեզ այդ հարկավոր եւ։

Այստեղից իր ամբողջ սրությամբ հարց ե առաջանում—կանանց մասսաներին, առաջին հերթին բանվորուհիներին, բատրակուհիներին և միջակ գեղջկուհիներին գրավել սոցիալիստական շինարարության մեջ։

Այդ պետք է վոչ միայն նրա համար, վոր առանց կանանց լայն մասսաների մասնակցության սոցիալիստական շինարարության խնդիրները չեն լուծվի; այլ և նրա համար, վոր ներկայումս կանանց մասսաները սկսել են շարժվել։ Սոցիալիստական հարձակումը, վոր ծավալում է մեր կուսակցությունը սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում—և քաղաքում, և գյուղում, — վոտքի յե հանել, շարժել ե կանանց լայն մասսաները։

Բանվորուհիները քննության են առնում շամայշա բանվոր, որիք, ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, սոցիալիստական մրցման և այլ խնդիրներ։ Բոլոր այդ խնդիրներն այսպես թե այնպես յուրաքանչյուր բանվորու հու հետաքրքրում են, նույն իսկ յեթե նա հասարակական աշխատանքներում առաջ վոչ մի մասնակցություն ցույց չի տվել։

Հացամթերման կամպանիան և գյուղատնտեսության կոլեկտիվացման լայն թափը գործի յեղամում գեղջկուհիների ամենայետամացխավերը։ Հացամթերման ժամանակ գեղջկուհիներն այժմ կարող են դատել այնպես, ինչպես այդ անում ելին մի քանի տարի առաջ։ «Եթե կպառկեմ թոնրի մոտ, իսկ այնտեղ թող հացամթերում անցկացնեն; ինձ այդ չի վերաբերում»։

Այժմ այդ անհնարին ե, վորովհետև հացամթերման հարցը վերաբերում է ամեն մի գյուղի, ամեն մի տան։ Յեթե կինը—չքափոր գեղջկուհի յեղին յեթե նա պատրաստված է կուսակցության կողմից, նա իր ուժերը միացնում է մեր կուսակցության ուժերին և նրա հետ միասին հացամթերում կատարում։ Յեթե կինը—կուլակ ե, տերտերի թմբուկով խաղացող, նա ևս չի քնում, նա ևս մոքիվացիայի յեղին թարկվում սակայն կուսակցության դեմ։ Գյուղում կանայք շարժվել են։ Նրանք քաղաքական կյանքից զրադ չեն քաշված, ինչպես առաջ եր, այլ այս կամ այն չափով աշխատանքներին ակտիվ մասնակցում են։ Գեղջկուհին այժմ գիտե, վոր իր ձայնը, իր ձեռքը, իր խոսքը մեծ նշանակություն ունեն։

Սակայն գեղջկուհիների լայն մասսան դեռ ևս չի ինքնորոշվել։ Դեռ նա փորձ, ունակություններ չունի իր շուրջը կատարվող դասակարգային

պայքարի իմաստն հասկանալու։ Նա գնում է նրա յետեկից, ով նրան իր յետեկից վարպետորեն տանում է։ Յեթե մենք կարող ենք նրան մորիկիզացիա անել և կազմակերպել, այն դեպքում նա մեզ հետ կլինի։

Մի քանի տարի առաջ յուրաքանչյուր կամպանիայի ժամանակ մենք այսպես ելինք դատում։ — յեթե կոմբջիջն աշխատում է լավ, նա աշխատանքը գեղջկուհիների մեջ ծավալում է, — դա ավելացնում է կուսակցության ուժը։ Իսկ այնտեղ, ուր կոմբջիջն այդ մոմենտը հաշվի չի առնում, աշխատանքը կատարվում է և առանց կանանց։ Մի քանի տարի առաջ դրանից առանձին վլասներ չեր լինում, պարզվում եր միայն ըջիջի թուլությունը մասսայի մեջ աշխատանք չտանելու հետևանքով։ Սակայն յեթե ներկայումս ել կոմբջիջն այդպես ե դատելու՝ «մորիկիզացիա կանենք—լավ, մորիկիզացիա չենք անի—նույնպես լավ», — այն ժամանակ գեղջկուհիները կարող են վորոշակի խանգարել կուսակցության և խորհուրդների ձեռնարկած մի շարք միջոցներին գյուղում։

Կանանց մասսան շարժվել ե, նա նման է փոթորկվող ծովի։ Նա գնում է մեր յետեկից այն դեպքում, յեթե մենք ակտիվ աշխատանք ենք տանում բարձրացնելու։ Նրա քաղաքական ու կուլտուրական մակարդակը, յեթե մենք լավ

Ենք անցկացնում պատգամավորական ժողովները  
և այդ ժողովները գրավում չքավորությունը, յեթե  
մենք տնտեսապես ոգնում ենք չքավորներին:  
Ըստհակառակը, այնտեղ, վորտեղ մենք կարևո-  
րություն չենք տալիս, աչքաթող ենք անում  
այդ աշխատանքը, գեղջկուհիները մեր դեմ են  
դուրս դալիս:

Վերջին յերկու տարին առանձնապես պարզ  
դարձավ մեզ համար, վոր պատգամավորական ժո-  
ղովներում, խորհուրդներում, կոռպերատիվ կազ-  
մակերպություններում ու այլ կուլտուրական հիմ-  
նարկներում աշխատող կանանց ակտիվը կուսակ-  
ցության և խորհրդի հետ միասին պայքարում ե-  
կուսակցության ձեռնարկած միջոցների համար:

Շատ հազվագյուտ կլինեն այնպիսի փաստեր,  
վոր աշխատավոր գեղջկուհիները, վորոնց մեջ  
կուսակցությունը հատուկ աշխատանք ե տա-  
նում, մեզ չեն ոգնել, մեր դեմ են գնացել:

Ինում ե, վոր ակտիվուհին իրեն աշխա-  
տանքներում չի հայտնաբերում. պատճառը նրա-  
նումն ե, վոր մենք նրան չենք սովորեցրել,  
չենք ոգնել, չենք ցույց տվել ակտիվուհուն վե-  
րաբերող բոլոր իրավունքներն ու պարտականու-  
թյունները: Բայց մենք չգիտենք գեղքեր, վոր  
ակտիվուհին դուրս գա կուսակցության դեմ:  
Ըստհակառակը, կան շատ փաստեր, վոր ակտի-

վուհին կովում ե կուսակցության հետ միասին,  
ողնում ե կուսակցությանը գյուղում անցկա-  
ցնելու այս կամ այն միջոցները:

Մեջ բերենք միայն մի քանի փաստեր, վո-  
րոնք ցույց կտան թե ինչպես կուսակցության,  
խորհուրդների և ուրիշ կազմակերպությունների  
կին-անդամները կուսակցության հետ աշխատում  
են հացամթերման կամպանիան անցկացնելու  
ժամանակ:

Բորիսովլեբովսկի շրջանում կոլեկտիվացման  
և բերքի տոնի որը կազմակերպվել ե շրջանային  
կարմիր կոնջ արող՝ 16630 սայլերով բեռնված  
մոտ 3400 տոննա\*: հացով:

Որենբուրգի շրջանի կաշիրսկի ուայոնում  
52 պատգամավորուհիներ ամբողջ ժամանակ ակ-  
տիվ մասնակցել են հացամթերման: Նրանք բաց  
են արել մի շարք՝ հացով թագցրած նորեր, ցու-  
ցակագրել են հացը չհանձնող կուլակների գույքը,  
ակտեր են կազմել: Սամարայի շրջանի Խվորոս-  
տյանկա գյուղում, շնորհիվ պատգամավորուհիների,  
հացամթերման պլանը կատարվել ե 115 տոկո-  
սով: Պենզայի շրջանի Ռաբզայ գյուղում ակտի-  
վուհի ընկ. Սոկոլովան կարողացավ կարճ ժա-  
մանակվա մեջ իր շուրջը համախմբել ու կազ-  
մակերպել կանանց լայն ակտիվ և նրանց հետ

\* Մի տոննան 61 փութ ե.

միասին հաջող անցկացրեց հացամթերումը, չնայած կուլակների կատաղի գիմադրությանը:

Սամարայի շրջանի, Մարևսկի ռայոնի Կարդուն գյուղում քանի վոր կանայք չեն մասնակցել հացամթերմանը, հացամթերման պլանը կատարված է յեղել 10%-ով, իսկ յերբ գեղջկուհիները մասնակից են արվել այդ աշխատանքներին՝ հացամթերման պլանը ավարտել են 100 տոկոսով:

Կուլակները, տեսնելով պատգամավորուհիների, խորհուրդների կին-անդամների ակտիվացիա-տանքը, ամեն կերպ աշխատում են խանդարել այդ աշխատանքներին և խփում են ակտիվին, վորտեղ հնարավոր ե լինում: Տների հրդեհման, ակտիվուհիների սպանության, ամեն տեսակի ծաղրանքի, հալածանքի և խայտառակության գեղքեր շատ կան: Ահա առանձին փաստեր:

Դնեպրոպետրովսկի ռայոնի Դիևկա գյուղում կուլակների ձեռքով սպանվել ե կոմյերիառնի բատրակուհի Մոգիլկան՝ հացամթերմանը մասնակցելու և ինդուստրացման փոխառության տոմսերի տարածման համար:

Յելեցի շրջանի, Շիլովսկի ռայոնի Կողյե գյուղում կուլակների ձեռքով գաղանաբար սպանվել ե պատգամավորուհի, չքավոր գեղջկուհի ակտիվուհի Խվոստովան: Սպանությունը կատարվել է վրեժ առնելու համար. Խվոստովան գյու-

ղական ժողովում դուրս է յեկել և ասել ե, վոր անհրաժեշտ է կուլակներից վերցնել հացի ավելցուկը: Մարդասպանները—կուլակ Լյուբուշինը և նրա կինը ձերբակալված են:

«Բեղնատա» թերթում գրվեց Ուլյանովսկի շրջանի Յակուշինակի գյուղիսորհրդի անդամ Անաստասիա Սեմկինայի վայրագ սպանության մասին: Այդ մասին պարզվեց հետևյալ մանրամասնությունները. ցերեկով Սեմկինան Մելեկես գյուղից դուրս յեկավ գեպի իրենց գյուղը: Շուտով գյուղիսորհրդ վազեց մի կին և հայտնեց, վոր ձորում տեսել ե խարույկի վրա վառվող մի դիմակ: Քննությունից պարզվեց, վոր Սեմկինան սպանվել ե գլխից նազանի գնդակից և հետո գցվել ե ձորը ու այրվել:

Որեշայում շրջանային գատարանը գնդակահարության դատապարտեց կուլակ Սկոպկովսկուն՝ կոխանովսկու գյուղիսորհրդի նախագահ գեղջկուհի Գոմբալովսկայի տնտեսությունը կրակ գցելու համար:

Կիւշինայում, Շիտովեցկի գյուղում կուլակների խումբը գաղանաբար սպանել ե ակտիվուհի Մելիչուկին: Դատարանը սպանությանը անմիջապես մասնակցող չորս կուլակների դատապարտեց գնդակահարության: Նման գեպքեր բաղմաթիվ են—մեր յերկրի բոլոր անկյուններում:

Կուլակները հասկացել են արթնացող կնոջ ակտիվության նշանակությունը և աշխատում են կանանց իրենց կողմը գրավել ու ոգտագործել նրանց՝ կուսակցության և խորհրդային իշխանության դեմ ուղղված պայքարում։ Մեզ հայտնի յեն բազմաթիվ գեղքեր, յերբ կուլակները ոգտագործել են կանանց՝ հացամթերման գործը քանդելու համար։ Գյուղատնտեսության կողեկտիվացման գործին ևս փասսելու համար նրանք հենվում են կանանց մասսաների վրա։

Այդ վոչ մի վարկյան մենք աչքաթող չպետք ե անենք, դա պետք ե մենք նկատի ունենանք գեղջկուհիների մեջ գործնական աշխատանք տանիք։ Այժմ պետք ե կարողանանք արթնացող կնոջ ակտիվությունն ուղղել դեպի կողետիվացման գործը։

Մենք պետք ե կարողանանք հենվել լայն մասսաների վրա և կարողանանք այդ մասսաներին մեր յետերից տանել։ Դրանից ե կախված մեծ գործի հաջողությունը։

## ՀՈՐԿԱՎՈՐ Ե ՎՃՌԱԿԱՆ ՇՐՋՈՒՄ ԿԱՆԱՑ ՄԵԶ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Կոլխոզուհիների համամիութենական առաջին համագումարը մեծ նշանակություն և ունենալու

գեղջկուհիների մեջ տարվող աշխատանքներում վճռական բեկում առաջ բերելու գործում։ Մենք շատ ենք յետ մնացել սոցիալիստական շինարարության այդ մասում։ Հոկտեմբերյան հեղափոխության 12 տարվա ընթացքում շատ քիչ բան ե արված այն պատճառով, վոր մենք աշխատանքը այս ասպլարիզում սկսել ենք գերոյից։ Յեթե համեմատենք մեր նվաճումները սոցիալիստական շինարարության գործում կուսակցության ընդհանուր նվաճումների հետ, այն գեղքում մենք շատ յետ ենք մնում բանվորուհիների ու գեղջկուհիների լայն մասսաներին սոց.-շինարարությանը մասնակից անելու գործում։

Դրա համար ել մեր կուսակցության կենտրոմը կուսակցական կազմակերպությունների առաջ կտրուկ ե դրել աշխատանքի այդ ասպարիզում վճռական բեկում առաջացնելու հարցը։ Բանվորուհիների և գեղջկուհիների մեջ մասսայական աշխատանքի խորացման ու կարգավորման և այդ մասսաների մորիլիզացիայի միջոցով միայն հնարավոր կլինի լուծել այսորվա մեծ, բարդ խնդիրները, մասնավորապես կոլեկտիվացման խնդիրը։

Լենին ասել ե. —

«Խորհրդային իշխանության սկսած գործը կարելի կլինի առաջ շարժել միայն այն ժա-

ցական կազմակերպությունները կարողացել են կազմակերպել կանանց ակտիվը, պատգ. ժողովները, խորհրդի կին-անդամներին՝ կամպանիաներ անցկացնելու համար, — այնտեղ այդ կամպանիաներն անցել են ավելի հաջող վոչ միայն նրա համար, վոր ի դիմաց պատղամավորուհիների, խորհրդի կին-անդամների ավելացել են նոր կազմակերպիչ ուժեր, այլ և այն պատճառով, վոր այդ ակտիվին ավելի հեշտ ե հաջողվում կանանց լայն մասսաներին ազիտացիայի յենթարկել և նրանց տանել իր յետեկից:


Ուստի և այս գարնանացանի կամպանիայի հիմնական խնդիրներից մեկն ե լինելու — մոքիլգացիա անել կանանց ակտիվը, իսկ նրա ողնությամբ՝ նաև կանանց լայն մասսաները:

## ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՌԴՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոլլոգինարարության և գարնանացանի կամպանիան հաջող անցկացնելու համար պետք ե գյուղի ուժերը և կանանց ակտիվն ու մասսան մոքիլգացիա անել: Սակայն այդ գործի հաջողությունը հիմնականում կախված կինի բանվոր դասակարգի կազմակերպչական ողնությունից: Կոլխոզուհիների համագումարում բանվորուհիներն ու շեֆ-ընկերությունների ներկայացուցիչները

պատմեցին, թե բանվորները ներկայումս ինչ են անում գյուղատնտեսության կոլեկտիվացման գործի համար: Կուսակցությունն սպասում ե բացի բանվորների ընդհանուր ոգնությունից՝ նաև բանվորուհիներից համապատասխան ոգնություն՝ գեղջկուհիներին կոլխոզ գրավելու և կոլխոզներն ամրացնելու գործում: Գյուղ ուղարկվող 25 հազար բանվորների մեջ պետք ե զգալի մասը կազմեն և այն բանվորուհիները, վորոնք բացի արտադրական փորձից ունեն նաև բանվորուհիների մեջ տարվող կուլտուրական, քաղաքական, և կենցաղային աշխատանքի մեծ փորձ: Այդ փորձը պետք ե ոգտագործել կոլխոզներում:

Կ 36 Կ 37 Կ 38  
Ներկայումս մեծ աշխատանք ե տարվում բանվորական բրիգադներ գյուղ ուղարկելու համար: Առանձին գործարանների շեֆ-կազմակերպությունները առանձին կոլխոզների շեֆությունն են վերցնում: Այդ գործում բանվորուհիները մեծ աշխատանք պետք ե տանեն կոլխոզուհիների կուլտուրական և կենցաղային կարիքները հոգալու համար: Վոչ վոք, բացի բանվորուհիներից, չի կարող այդ հարցերը հարուցել միշտ և բոլշևիկորեն: Բանվորուհիներն այդ աշխատանքը իրենց ուսերի վրա տարան քաղաքում և կարող են այդ փորձը գյուղ տանել, կարող են ոգնել գեղջկուհիների այն ակտիվը:



վոր կոփվել ե հեղափոխության 12 տարվա ընթացքում և առանձնապես գյուղատնտեսության կոլեկտիվացման պրոցեսում:

Գեղջկուհիների մեջ տարվող աշխատանքներում մինչև այժմ մեր սխալն յեղել ե այն, վոր չենք կարողացել պարզել, թե մեզ զրջապատղ կանանց մասսայի միջից ով ե մեզ ավելի մռատիկ: Վոչ միշտ և վոչ ամեն տեղ մենք աշխատանք ենք տանում առաջին հերթին չքավորուհիների և բատրակուհիների մեջ: Յեթե մենք խոսում ենք գյուղում կանանց մեջ տարվող աշխատանքների մասին, այդ վերաբերում ե ընդհանրապես գեղջկուհիների մեջ տարվող աշխատանքին: Այժմ պետք ե այդ աշխատանքներում դասակարգային պարզություն մտցնել և այս խնդրի վրա հատուկ ուշադրություն դարձնել:

Իր ամբողջ պարզությամբ պետք ե դրվի ու պարզաբանվի մեր վերաբերմունքը դեպի կուլակն ու նրա ընտանիքը: Կուսակցության կենտրոնն այս հարցի մասին միանգամայն պարզ վորոշում ունի — մենք կուլակներին կուլիող չենք թողնի:

Անա այդ հարցի մասին ինչ ե ասում Համկոմկուսի քարտուղար ընկ. Մոլոտովը: —

«Տատանումն այդ հարցում անթույլատրելի յե առաջին հերթին նրա համար, վոր

կոլխոզները դեռ թույլ են, գեռ չեն կարողացել վոտքի կանգնել: Կուլակին ներկայիս կոլխոզները թողնելը սպառնում ե նրանցից շատերի քայլամանը: Սակայն յերբեմն հարցնում են — ինչպես վարվել կուլակի հետ: Դժբախտաբար, այդ հարցը հաճախ տալիս են նույնիսկ այն ժամանակ, յերբ ինչպես պետք ե դեռ չեն մտածել հիմնական հարցի, այն հարցի մասին, թե ինչպես հոգալ բատրակի ու չքավորի մասին և ինչպես կազմակերպել կոլխոզում բատրակ-չքավորական կորիգ: Իսկ չե՞ վոր այդ հարցը առաջինը պետք ե լինի կոլխոզ-կազմակերպիչների համար, վորոնք գործը կոմունիստորեն են դնում:

Սակայն պետք ե պատասխանել և այն հարցին, թե ինչպես վարվել կուլակի հետ: Այդ հարցի պատասխանը բղիում ե այն հանգամանքից, վոր մենք այժմ ամբողջ ֆրոնտում ծավալուն հարձակում ենք գործում կապիտալիստական ելեմենտների վրա: Ուստի, այն հարցին, թե ինչպես վարվել կուլակների հետ, մենք պետք ե պատասխանենք. — վերաբերվիր կուլակին վորպես չարագույն և դեռ հաղթված թշնամու: Վոր այդ չարագույն թշնամի յե, այդ մասին մեզ հիշեցնում են



ամեն որ կուլակային տեսորի, կուլակային հարձակման, հրդեհների, մեր աշխատակիցների, ակտիվ կոլխոզնիկների, հեղափոխությանը նվիրված բատրակների ու չքավորների սպանության հազար հազարակոր փաստեր։ Վոր այդ չարագույն թշնամին դեռ ևս չի հաղթված, չի տապալված վերջնականապես, այդ մասին նույնպես խոսում են բազմաթիվ որինակներ։ Կուլակը չի դադարում վնասէլ կոլխոզներին վոչ միայն նրանց դեմ ուղղված բաց կռվում, այլ և սողոսկելով կոլխոզները, իսկ յերեմն ել վարչական մարմինները։ Ուստի այն միջոցները, վոր բղխում են դեպի կուլակը, դեպի մեր այդ չարագույն չաղթված թշնամին ունեցած վերաբերմունքից, — այդ միջոցները կինեն ճիշտ և անհրաժեշտ։ Առանց այդպիսի վերաբերմունքի դեպի կուլակությունը մենք չենք տիրանա կոլեկտիվացման գործին։<sup>\*</sup> Այս հարցի մասին ընկ. Ստալինն ասում ե.

«Վոչ պակաս ծիծաղելի յե թվում մի ուրիշ հարց. կարելի՞ յե կուլակին կոլխոզ թողնել. իհարկե, չի կարելի նրան թողնել կոլխոզ։ Զի կարելի, վորովհետև

\* Մոլոտով — «Կոլխոզային շարժման մասին»։

նա կոլխոզային շարժման յերդվյալ թշնամին եւ, կարծում եմ պարզ ե»։

### ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ

Կուսակցության ընդհանուր խնդիրների լուծման մասնակից լինելու համար ներկայումս լայն մասսաների մոքիլիզացիայից բացի մեծ նշանակություն ունի կագրերի հարցը։ Մենք դեռ բավականին յետ ենք մնում կուսակցության, խորհուրդների և ուրիշ տեսակի հասարակական աշխատանքների մեջ կանանց գրավելու գործում։ Ավելի ևս յետ ենք մնում՝ բանվորուհիներից, բատրակուհիներից և չքավոր գեղջկուհիներից կաղըեր պատրաստելու ասպարիզում։ Կենտկոմի նոյեմբերյան (1929 թ.) պլենումը ամբողջ վճռականությամբ զբեց բանվոր դասակարգից և բատրակությունից կաղըեր պատրաստելու հարցը։ Բանվորուհիներն ու գեղջկուհիներն ավելի ևս յետամաց են և բոլորից շատ են. կարիք զգում կրթության, գործնական պատրաստման։

Մենք բոլորս չափազանց շահագրգուված ենք գյուղատնտեսության համար կաղըեր պատրաստելու գործում։ Կին գյուղատնտեսներ, անմիջապես դաշտերում աշխատող, շատ քիչ են, իսկ մեզ հարկավոր են տասնյակ, հար-

յուր հազարավորներ։ Այս մեր ամենաթույլ  
կողմն ե։ Մենք անցյալում, ինարկե, չենք  
ունեցել բատրակուհիներից ու գեղջկուհիներից  
գյուղատնտեսներ, տեխնիկներ, գեկավարներ պա-  
տրաստելու և վոչ մի փորձ։ Ներկայումս այդպիսի  
կազմեր կարող են լինել և պետք ե լինեն։

Կանանց մասսայի կրթության հարցը—մար-  
տական հարցերից մեկն ե։ Մենք յետ ենք մաս-  
ցել սոցիալիստական շինարարության այդ մասից,  
յետ ենք մնացել գլխավորապես նրա համար, վոր  
կանանց մասսաներն ամենախավար, ամենից  
անզրագետներն են։ Այժմ, յերբ մենք մեր  
առաջ դրել ենք գյուղատնտեսության կոլեկտի-  
վացումը անցկացնել մեկ, մեկ ու կես տարում,  
մենք հանդիպում ենք ամբողջ ուսունական հան-  
րապետությունների, ուր կանայք բացարձակ  
անզրագետ են, լավ դեպքում՝ գրագետները կազ-  
մում են 2—3 տոկոս, ինչպես որինակ Ուզ-  
բեկաստանում։ Իսկ յեթե վերցնենք ամբողջ Միու-  
թյունը, այն դեպքում կանանց վացսուն տոկոսը  
կլինի անզրագետ։ Մենք նրանց գրավում ենք  
կոլխոզները, իսկ նրանք ներկայումս չգիտեն վոչ  
կարդալ, վոչ գրել։

Դա մեր հիմնական դժբախտությունն ե,  
վորից մենք շատ դանդաղ ենք ազատվում և  
դանդաղ ել կրթության ճամբան բռնում։ Այժմ,

յերբ ամբողջ կուսակցության և խորհրդային հա-  
սարակայնության կողմից իր ամբողջ մեծու-  
թյամբ դրված և կրթության հարցը, մենք վոր-  
քան հնարակոր ե պետք ե կրթենք կանանց մաս-  
սաները, առաջին հերթին բանվորուհիներին,  
բատրակուհիներին և չքավորուհիներին։ Այլապես  
վոչ մի արժեք չեն ունենալու բոլոր խոսակցու-  
թյուններն այն մասին, վոր կոլխոզուհուն կամ  
կոմունարուհուն ընտրելու յեն խորհուրդներում,  
կոլխոզների վարչություններում, վոր նա յերբ-  
եկցե կլինի կոլխոզում գյուղատնտես կամ նա-  
խագահ։ Յեթե մենք այսոր կանանց լայն մաս-  
սայի համար տարրական կրթության խնդիրը չենք  
բարձրացնի, այն դեպքում դեռ շատ պետք ե  
սպասել, վոր մենք բատրակուհիներից ու չքավոր-  
կոլխոզուհիներից այդ կազմերը առաջ քաշենք։

Մեզ համար գլխավորը կրթությունն ե։ Յեկ  
չնայած նրան, վոր գեղջկուհին շատ դժվար ե սո-  
վորում, վոր նա ունի յերեխաներ և տնային տնտե-  
սություն, սակայն նա պետք ե մի ծանրություն  
և իր ուսերի վրա վերցնի։ Յեկ այն խոսակ-  
ցությունները, վոր կան նույնիսկ գյուղական  
ակտիվի շրջանում, թե «մենք մի կերպ առանց  
գրագիտության կապրենք, կարեոր ե, վոր մեր  
յերեխաները սովորեն», — այդ խոսակցություն-  
ները վոչ մի արժեք չունեն։

Հաճախ հարց են դնում այն մասին, վոր չի կարելի կանանց համար կրթություն պահանջել, յերբ բատրակների և չքափորների շատ յերեխաներ անդրագետ են մնում։ Այդ, իհարկե, մեծ շարիք ե, վոր մենք ամեն միջոցներով պետք ե վերացնենք։ Սակայն դա հերթից չի հանում մեծահասակ աղքաբնակչության, առանձնապես չքափոր գյուղացիների, զեղջկուհիների ու բատրակուհիների շտապ սովորելու հարցը։

Կանանց կրթության հարցը պետք ե դարձնել այսորվա քաղաքական խնդիր, Գեղջկուհիներից, գլխավորապես չքափորությունից և բատրակությունից կաղըեր պատրաստելու, առաջ քաշելու միակ ճանապարհն ե ամենաշտապ կերպով վերացնել կանանց լայն մասսաների անդրագիտությունը։

### ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԸ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ— ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ Ե ՈՒ ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Պետք ե ահակոչել ամբողջ Միության մեջ, վոր անդրագիտությունն ու տղիտությունը հանդիսանում են գլխավոր արգելքը վոչ միայն կանանց լայն մասսաներին խոշոր ղեկավար աշխատանքների առաջքաշման, վոչ միայն գյուղատնտեսության համար մասնագետներ պատրաստելու, այլև ամբողջ սոցիալխատական շինարարութան գործում։

Ներկայումս հերթի յեն դրված աշխատանքի կազմակերպման, կոլխոզներում կենցաղի բարելավման, կոլխոզուհիների առաջքաշման մեծ ու կարեսը խնդիրները։ Յուրաքանչյուր նման հարցերում ամեն տեղ և ամեն ժամանակ մենք գեմ ենք առնում այն բանին, վոր մեզ մոտ կան շատ տաղանդավոր, մասսաների հետ կապված և մասսաների կարիքներն արտահայտող մարդիկ, վորոնց մենք այսոր չենք կարող առաջ քաշել, վորովհետև նրանց մեծ մասը բոլորովին անպատրաստ են։ Յենթաղըել, վոր անդրագետ մարդիկ կարող են մեծ աշխատանք կատարել, մենք չենք կարող։

Կոլխոզներից, առանձնապես համատարած կոլեկտիվացման ռայոններից պահանջում են մսուրային աշխատակիցներ և անպայման այդ աշխատակիցները պիտի լինեն բատրակուհիներից, չքափորներից։ հարկավոր են կոլխոզների կազմակերպիչներ — և անպայման բատրակուհիներ և չքափոր զեղջկուհիներ։ Վորտեղից վերցնել այդ մարդկանց։

Սակայն մտածել, վոր կոլխոզների շինարարական ամբողջ աշխատանքը կկատարեն միայն նրանք, ում գյուղ կուղարկեն, — չի կարելի։ Բանվորները գյուղին ողնության կգան, սակայն նրանք լինելու յեն կազմակերպողներ։ Հարկա-

վոր ե վոր կազմակերպիչների հիմնական մաս-  
սան առաջ գա գեղջկուհի-կոլլսոգուհիներից,  
առանձնապես չքավորուհիներից և բատրակուհի-  
ներից։ Դրա համար ել կանանց մեջ տարվելիք  
աշխատանքներում կուլտուրական հարցերը, և  
առաջին հերթին տեխնիկական գրագիտության  
հարցերը, պետք ե համարվեն հարվածային և  
դրվեն ռազմական հողի վրա։

Այն, ինչ վոր չենք հասցըել կատարելու Հոկ-  
տեմբերյան հեղափոխության անցած տարիներին,  
պետք ե կատարել այժմ։ Ակտիվի աշխատանքն  
այս ուղղությամբ պետք ե լինի որինակելի։ Զե-  
վոր մեզ մոտ, կոլլսոգներում կանանց մասսան  
60 տոկոսով անգրագետ ե։ Նույն իսկ համատա-  
րած կոլեկտիվացման ռայոններում կանանց  
անգրագիտությունը յերբեմն հասնում է 80 տո-  
կոսի։ Նույնիսկ յերկար տարի գոյություն ունե-  
ցող կոմունաներում անգրագետների տոկոսը  
շատ բարձր ե, և այդտեղ անգրագիտության  
վերացման գործը այդ տարիներում վատ և  
դրված յեղել։

### ԿԱՆԱՆՑ ԱԿՏԻՎԸ ՄԵԾ Ե ԳՅՈՒՂՈՒՄ, ԲԱՅՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶԱՓՈՎ ԶԻ ՈԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ

Գյուղական կանանց ակտիվը մեծ ե. նրանք  
գլխավորապես աշխատում են գյուղխորհուրդնե-

րում։ Մենք ունենք 300 հազար գյուղխորհուրդի կին-  
անդամներ, ունենք 5 հազար գյուղխորհուրդի կին-  
նախագահներ և շատ կանայք՝ ուայոնական գործ-  
կոմների նախագահներ։ Սակայն այդ ակտիվի  
շարքերում ևս անգրագետների ու կիսագրագետ-  
ների տոկոսը շատ մեծ ե։ Այժմ մենք գեպի  
ակտիվուհին ավելի պահանջկոտ պետք ե լինենք,  
քան այդ յեղել ե մինչև այժմ։ Յեթե դու ակ-  
տիվուհի յես, յեղիք առաջնորդ, որինակ ցույց  
տուր, թե ինչպես կարելի յե և պետք ե այժմ,  
սոցիալիզմի կառուցման ներկա պայմաններում  
աշխատել։

Ակտիվը պետք ե առանձին յեռանդով սովորի։  
Պետք ե վերջ տալ բոլոր այն խոսակցություններին, վոր հաճախ մենք լսում ենք ակտիվուհիներից, ավելի քիչ՝ բատրակուհիներից, իսկ հաճա-  
խակի՝ գյուղական չքավորությունից, այս մտքով—  
իսկ եք ինձանից ուզում, յես անգրագետ եմ և  
չեմ սովորել։

Մենք գիտենք, վոր հին ժամանակ սովորելու  
համար չկային պայմաններ, իսկ այժմ այդ պայ-  
մանները կան։ Այժմ կուսակցությունը, բանվոր  
դասակարգը և գյուղական չքավորությունը  
գյուղատնտեսության կոլեկտիվացման մեծ գործն  
են շինում, հսկայական աշխատանք են կատա-  
րում մեծ զոհաբերությամբ, իսկ վերացնել սե-

փական անդրագիտությունը — դրա համար չի  
բավականանում ուժ, վոգերություն, ժամանակ,  
Յեթե ակտիվուհիները — գյուղխորհրդի նա-  
խագահները կամ ուրիշ զեկավար դիրքերում  
աշխատողները մնում են անդրագետներ, այն  
դեպքում շարքային գեղջկուհիներն ևս առավել  
մնում են այդպիսին: Ակտիվուհիներից պահան-  
ջվում ե վոչ միայն տեխնիկական գրագիտու-  
թյուն, այլև քաղաքական մակարդակի բար-  
ձրացում: Անհրաժեշտ ե կյանքի յետերից գնալ,  
անհրաժեշտ ե հետեւ թե ինչպես ե կյանքն առաջ  
շարժվում: Մենք վերջին տարին շատ կանաց,  
գլխավորապես բանվորուհիների, ուղարկեցինք  
սովորելու — վոչ անգրագիտության վերացման  
կուրսեր, այլ միջին և բարձր դպրոցներ: Մենք  
նրանց ուղարկեցինք և բարձրագույն տեխնիկա-  
կան ուսումնական հիմնարկներ, և համալսարան-  
ներ, և բանֆակներ: Բանվորուհիների բարձրա-  
գույն ուսումնական հիմնարկներն ընդունվելը  
հեշտացնելու համար մի շարք միջոցներ են ձեռք  
առնված: Կազմակերպած են նախապատրաստական  
դասընթացներ հիմնարկություններում՝ բանվո-  
րուհիներին պատրաստելու բարձրագույն դպրոց-  
ներ մտնելու համար: Իսկ գյուղատնտեսական  
բարձրագույն դպրոցները, բանֆակները քէչ  
գեղջկուհիներ են ուղարկված սովորելու,

Շրջաններ, հանրապետություններ, ունենա-  
լով հազարավոր կանաց ակտիվ, չեն կարողա-  
նում լրացնել իրենց ուղարկված տեղերը, չեն  
կարողանում հազարավոր կանացից ընտրել այն  
տասնյակներին, վորոնք կարող են սովորել:  
Այստեղ դեռ շատ պահպանողականություն կա:  
Անգրագիտության վերացման, մասսաների քա-  
ղաքական և կուլտուրական մակարդակի բար-  
ձրացման, ակտիվի կրթության հարցերը պետք ե  
առաջադրվեն առաջին հերթին: Միայն այն ժա-  
մանակ բոլոր արմատական հարցերը կկարողա-  
նանք լուծել և առաջադրել ինչպես հարկն ե:

### ՈՒՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱԿՏԻՎԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Առանձնապես պետք ե կանգ առնել ակտի-  
վի պատրաստման աշխատանքների վրա: Մեր  
քիչ թե շատ պատրաստված և գործնական  
աշխատանքներում ստուգված գեղջկուհիներն  
աշխատում են գյուղխորհրդներում և գործկոմ-  
ներում: Խորհուրդները պետք ե հետեւ, վոր  
գեղջկուհիները, վոր խոշոր աշխատանքների հա-  
մար են ընտվրած, առաջադիմեն, զարգանան:  
Ունենք 5 հազար խորհրդի կին-նախագահներ, և  
պետք ե աշխատենք, վոր նրանք զարգանան,

առաջ շարժվեն ամելի պատասխանութու աշխատանքների։ Այսինչ մի շարք տեղերում հաճախ խորհրդի կին-անդամները միայն թղթի վրա յեն հաշվում։ Կանայք լրացնում են հարցաթերթիկը, ներկա յեն լինում գյուղվարհրդի առաջին նիստին և դրանով գործը վերջանում է։ Խորհրդն ինքը վատ ե աշխատում կանանց մեջ, այդ ակտիվին չի գրավում գործնական աշխատանքների։

Պետք է հետևել խորհրդի կին-անդամների գործնական աշխատանքներին, նրանց կրթությանը և ողնել նրանց աշխատանքներում։ Պետք է հետևել, վոր այդ ակտիվը չկորցնենք։ Հաճախ ընտրություններին մենք հերոսական միջոցների յենք դիմում, բայց հենց վոր ընտրեցինք — մոռացանք։ Ինչպես են ընտրությունները հետագայում առաջ գնում, ինչպես նրանց յետ են քաշում, աշխատանքից հանում, մի շարք գեպեքերում ծաղրի յենթարկում — այս բոլորին շատ քիչ են հետևում։ Այնինչ, ներկայումս, յերբ յուրաքանչյուր ակտիվունի գյուղում հսկայական արժեք ունի, այդ ակտիվունուն աչքաթող անել անկարելի յեւ, ուղղակի հանցանք եւ:

ՄԵՆՔ առանձին ուշադրությամբ պետք ե  
հետևենք խորհրդային ակտիվին, վորովհետև նա  
շատ ե։ Շատ կան այնպիսի ակտիվուհիներ,

վորոնք արդեն իրենց համար դիրք են ձեռք  
բերել խորհրդային աշխատանքներում վորպես  
նախագահներ և այլ պաշտոնյաներ։

Մեր կուսակցության կենտրոնը վճռական  
աշխատանք ե պահանջում՝ բանվորուհիներին,  
բատրակուհիներին և չքավոր գեղջկուհիներին  
առաջ քաշելու խոշոր դեկավար աշխատանք-  
ների։ Մի շաբթ արջաններում մենք կարողացանք  
բանվորուհիներին դեկավար աշխատանք-  
ների դնել, բայց բատրակուհիների և չքավոր  
գեղջկուհիների առաջքաշումը շատ վատ ե  
դրված։ Կուսակցական կազմակերպություններն  
այդ խողիրը չեն կատարել։ Այստեղ մեղավորու-  
թյունը վոչ միայն մեր կուսակցական կազմակեր-  
պություններին ե, այլ և կանանց ակտիվինը։

Գեղջկուհի-ակտիվուհիների մեջ կան բավականին զլագետ, պատրաստված, քաղաքականապես զարգացած ընկերներ, վորոնց կարելի յեղեկավար աշխատանքների առաջ քաշել: Այս տարի Խորհրդային Միության կենտրոնակոմիներում մենք անցկացրինք 16 տոկոս կանանց: Իսկ անցյալ տարի նրանք այնտեղ 8 տոկոս եին կազմում:

Սակայն կենտգործքների անդամ-կանայք  
միշտ չե վոր կատարում են այն պարտականու-  
թյունները, վոր նրանց վրա զրվում ե։ Հաճախ  
նրանք մասսաների հետ չեն կապվում, չեն հան-

դիսանում կուսակցության ոգնականներ տեղերում։ Շրջանային և այլ կազմակերպությունները աշխատանքներում նրանց չեն ոգնում, կենտրոնացրծկոմիների՝ կին-անդամներից շատերն ուղում են աշխատել, բայց չգիտենինչպես անել և ինչից սկսել. իսկ նրանց ոգնող չկա:

### ՈԳՆԵՆՔ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ԱՌԱՋՔԱՇՄԱՆԸ

Կոլխոզուհիների համագումարը կողնի կատարելու կուսակցության գիրեկտիվը գեղջկուհիների առաջքաշման խնդրում։ Մոսկվայում կենտրոնական մարմիններն ասում են. «տվեք մեզ գեղջկուհիներ աշխատանքի համար»։ Մենք սկսում ենք գրել, զանգահարել, հեռագրել և շատ քիչ ենք ստանում այն, ինչ հարկավոր եւ Պետք ե, վոր գեղջկուհիների ակտիվը հաշվի առնված լինի, վորպեսզի նրան պատրաստեն, սովորեցնեն։ Խորհրդային ապարատը շատ քիչ գեղջկուհիներ և առաջ քաշում վոչ միայն կենտրոնական հիմնարկներում, այլև տեղերում այդ գործը շատ դանդաղ է առաջ գնում։

Յերբ գեղջկուհուն առաջ են քաշում, հաշվի չեն առնում վոչ նրա պատրաստականությունը, վոչ նրա ցանկությունը, —ուղում ե նա այս կամ այն շրջանում աշխատել թե վոչ, —զրի յեն

առնում և առաջ քաշում։ Ընտրվածը չհասցըեց ընտելանալ, յուրացնել աշխատանքը, արդեն լուրեր են պատվում, վոր թույլ ե, համապատասխան չե, իրա տեղը չե, վոր նա աշխատանքները չի կարողանում կատարել։ Այդպես վարվելով չպետք ե հուսահատեցնել առաջքաշվածին, պետք չպետք ե նրան ոգնել, ամեն կերպ ոգնել՝ վոր գործին և նրան ոգնել, ամեն կերպ ոգնել՝ վոր գործին և նրան գանձին պաշտոնի կարգելլը, ինարկե պետք ե գործին լուրջ վերաբերվել։ Այս խնդրում գլխավոր դեր խաղում ե թեկնածուներ ջոկելը, լնտրելը, պետք ե ջոկել ավելի լնդունակներին, պետք ե ոգնեն նրանց աշխատանքներում և կուսակցական կազմակերպությունները, և կանանց մասսաները։

### ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ ԴԱՐՁՆԵՆՔ ՄԱՐՏԱԿԱՆ ՇՏԱԲՆԵՐ

Կաղըերի պատրաստման գործում գյուղի պատգամակութական ժողովների վրա մեծ պարտականություններ են ընկնում։ Յեթե նայում ենք մեր կանանց ակտիվին, աշխատանքի յուրաքանչյուր շրջանում — խորհուրդներում, կոոպերացիայում, պրոֆմիություններում և այլն — պարզվում ե, վոր գյուղական ակտիվի մեծագույն մասը դուրս է յեկել պատգամավորական ժողովի

կողմից, այդտեղ ե նա ստացել թե գործնական  
և թե քաղաքական իր առաջին պատրաստու-  
թյունը: Խորհուրդների ներկայիս կազմում կին  
անդամների 80 տոկոսը նախկին պատգամավո-  
րուհիներ են: Այստեղից դուք տեսնում եք, թե  
ինչ դեր են խաղում պատգամավորական ժողով-  
ները: Այդ հիմնական համալսարան ե գյուղում,  
վոր պատրաստում ե կանացից ղեկավար ակտիվ:

Պատգամավորական ժողովները գյուղում վատ  
չեն աշխատում: Վերցնենք թվական տվյալներ: 1928 թվին գյուղում աշխատել ե 12 հազար  
պատգամավորական ժողով, ընդգրկելով 300 հա-  
զար պատգամավորուհիներ, իսկ 1929 թ. աշ-  
խատել ե արդեն 21 հազար պատգամավորական  
ժողով, ընդգրկելով 606 հազար պատգամավորու-  
հիներ: Յերկու տարվա մեջ ավելացել ե համարյա-  
յերկու անդամ: Բայց մինչև այժմ պատգամավո-  
րական ժողովների աշխատանքն այնպես չի դրված  
տեղերում ինչպես հարկն ե: Այնինչ նրանք ներ-  
կայում կուսակցության համար գյուղում ամե-  
նաանհրաժեշտ կազմակերպություններն են, վո-  
րոնք առաջնակարգ դեր պիտի խաղան կանաց  
մասսաների կազմակերպման և պետություն կառա-  
վարելու համար կադրեր պատրաստելու գործում:

Ի՞նչպես ե պատգամավորուհին աճում աշխա-  
տանքի մեջ, այդ աշխատանքը ի՞նչ ե տալիս

Նրա հետագա աճման և առաջքաշման համար:  
Մեր դիտողություններն ասում են, պատգամա-  
վորուհիների գործնական աշխատանքը, վոր  
հարանց հանձնում են՝ հնարավորություն ե տա-  
լիս պատգամավորունուն ավելի լավ յուրացնելու  
այն խնդիրները, վոր դրված են այդ կազմա-  
կերպությունների առաջ: Այժմ պատգամավորու-  
հիների գործնական աշխատանքը դեռ ևս շատ  
վատ ե դրված: Այս տարի մենք ունեցինք 600  
հազար պատգամավորուհի, իսկ գործնական աշ-  
խատանքի համար ուղարկվել են միմիայն 300  
հազար:

Իսկ այդ 300 հազար պատգամավորուհիներից  
վորքանն են իսկապես աշխատել խորհուրդներում և  
կոռպերացիաներում: Լավ գեպօռմ — կեսը, իսկ  
մացածները միայն թղթի վրա յեն յեղել: Այժմ  
այդ գործի վրա պետք ե առանձին ուշադրու-  
թյուն դարձնել և ուղղել յեղած սխալները:

Անցյալ կազմի պատգամավորուհիները մեծ  
մասնակցություն ցույց տվին սոցիալիստական  
մրցմանը, հացամթերումներին, աբոզներ կազմա-  
կերպեցին և այլն: Գյուղատնտեսության կոլեկ-  
տիվացման գործում մի շարք տեղերում պատ-  
գամավորուհիները յեղել են նախաձեռնողներ կո-  
մունաների, արտելների, կոլխոզների կազմակերպ-  
ման գործում: Մասնակցում են փոխառություն-

ների տարածմանը, ինքնահարկի անցկացմանը և  
այլ աշխատանքներում:

Այդ ցույց ե տալիս, վոր պատգամավորական  
ժողովների կազմը այնպիսին ե, վոր կարող ե  
ողնել կուսակցությանը կերառելու իր առաջ  
դրված խնդիրները։ Հիմնականում կազմը — չքա-  
վոր-բատրակային ե, այնպիսի կազմ, վորի վրա  
մենք կարող ենք հենվել մեր ձեռնարկած միջոց-  
ներն անցկացնելիս։ Սակայն այժմ, յերբ պատգ.  
ժողովների ընտրությունները վերջացել են,  
մենք իմանում ենք, վոր մի շարք ռայոններում,  
մանավանդ Արևելքում, կան այնպիսի պատգա-  
մավորական ժողովներ, վորոնց կազմում կան  
դգալի տոկոս խորթ տարրեր։

Այս մոմենտին, յերբ դասակարգային պայ-  
քարը չափաղանց սրված ե, յերբ մենք կուլա-  
կին՝ գորպես դասակարգի՝ վերացնելու հարցն ենք  
դրել, յերբ մենք կուլակին քշում ենք պատու-  
հանից, դռնից ե ներս սողոսկում, մենք նրան  
ողանցքից ենք քշում, նա — ծխնելույթից ե  
մտնում, — յենթադրել, վոր պատգամավորական  
ժողովները կմնան «սրբեր», վոր այնտեղ կուլակի և  
տերտերի կինը չեն սողա, յենթադրել չենք կարող։

Ուստի անհրաժեշտ ե անմիջապես յուրաքան-  
չյուր պատգողովի կազմը վերանայել՝ նրա դա-  
սակարգային դեմքը պարզելու համար։ նայել, թե

վորքան ե այնտեղ բատրակուհիների, չքավոր և  
միջակ գեղջկուհիների տոկոսը։ Յեթե այնտեղ կա-  
բատրակուհիների և չքավորուհիների միաձուլված  
խմբակ, վոր իր յետերից տանում ե միջակ մաս-  
սային, — շատ լավ ե։ Յեթե չե՛ պետք ե անել  
հետեւյալը. առաջին հերթին պատգամավորական  
ժողովը մաքրել կուլակ և կուլակամերձ գեղջկու-  
հիներից, իսկ հետո լրացուցիչ ընտրություն կա-  
տարել բատրակուհիներից և չքավորուհիներից  
այն հաշվով, վոր պատգամավորական ժողովում  
չքավոր-բատրակային խմբակը կազմե հիմնական  
կորիզը և կարողանա ղեկավարել։

## ՎՈՐ ՄԻ ԿՈԼԽՈԶ — ԱՌԱՆՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Կենտկոմը պատգամավորական ժողովների վեր-  
ընտրությունների առթիվ իր հրահանգում ասել ե,  
վոր պատգամավորական ժողովներ հարկավոր ե  
կազմակերպել բոլոր կոլխոզներում։ Հենց վոր կազ-  
մակերպվում ե կոլխոզ, անմիջապես պետք ե  
կազմակերպվի պատգամավորական ժողով։ Բայց  
լինում ե վոր կազմակերպվում են կոլխոզներ, իսկ  
պատգողովներ չեն կազմակերպվում։ Զպետք ե  
վախենալ այն հանգամանքից, վոր յեթե կոլխո-  
զում չկա կոմբջիջ, չի կարելի պատգողով կազ-

մել: Պետք ե ոգտագործել բանվոր դասակարգի ուժերը, առաջին հերթին 25 հազար բանվորների գյուղ գնալը, ոգտագործել շեֆ-կազմակերպությունների ուժերը: Մենք դեռևս բոլորը չենք ոգտագործել: Մենք ինքներս դեռ չենք շարժվել: Զե՞ վոր գյուղերն են ուղարկվում բրիգադներ, առանձին գործարաններ առանձին կոլխոզների շեֆությունն են վերցնում: Այդ բանվորներին ու բանվորութիններին պետք ե վոր հանձնարարի պատժողովների կազմակերպումը: Խոշոր խորհրդային տնտեսությունների բանվորներին նույնպես կարելի յե պատժողովների կազմակերպման գործը հանձնել. յեթե ընկերները դեկավարում են խոշոր տնտեսության աշխատանք, իհարկե, կարող են նաև պատժողով դեկավարել:

Պատգամավորական ժողովներ հարկավոր ե կազմակերպել ձմեռը և ամառը: Հարկավոր ե հրաժարվել այն մտքից, վոր միայն աշնանը կենտկոմի հրահանգից հետո, միայն հոկտեմբերի և նոյեմբերի ընթացքում են կազմակերպվելու պատժողովները: Մենք պետք ե նրանց կազմակերպենք կոլխոզների կազմակերպման հետ զուգընթաց, հենց այն ուժերով, վորոնք ոգտագործվում են կոլխոզների կազմակերպման համար:

Այս ատրամագան ձմեռը կվորոշե կոլեկտիվացման հիմնական հարցը. ամեն ինչ կախված ե գարնա-

նացանի կամպանիայի հաջողությունից: Կենտկոմի պլենումը վորոշել ե իսկական բոյլշեփեյան գարնացանի կամպանիա: Այժմ աշխատանքը պետք ե ուղարկան հողի վրա դրվի: Քեզ ընտրեցին պատգամավորուհի — ուրեմն պատրաստ յեղիր գարնացանի կամպանիային: Ծրագիրը լավ բան է, ոգնում ե սովորելուն, բայց այժմ այնպիսի ժամանակ ե, յերբ մենք մեր ակախիլը պետք ե մորթիլզացիս անենք: Կարելի յե ծրագիրը ժամանակավորապես յետաձգել:

Հարկավոր ե պատգամավորական ժողովների աշխատանքը գործնականի վերածել, վորպեսզի այն գործնական խնդիրները, վորոնք այժմ դրված են զյուղի առաջ — ազրուալրոպագանդի, գարնացանի կամպանիայի պատրաստման — այդ խնդիրները պատգամավորական ժողովների աշխատանքների առանցքը կազմեն: Խաղաղ աշխատանքից պիտի առաջ պետք ե անցնել ու ազմական աշխատանքից: Պետք ե յուրաքանչյուր պատգամավորուհուն ոգտագործել գարնանացանի կամպանիայի աշխատանքների համապատասխան շրջանում:

Համատարած կոլեկտիվացման ույաններում պատժողովների աշխատանքները ցույց են տալիս, վոր այնտեղ, վորտեղ աշխատանքները լավ են դրված, վորտեղ կոմբինատիվները լավ են աշ-

խատում, վորտեղ պատգամավորուհու ձեռքը գործնական աշխատանք են տալիս, — այնուեղ պատգամավորուհիները մեծ աշխատանք են տանում: Այդ բոլորը հարկավոր ե հաշվի առնել:

Մարդկանց հարկավոր ե պատրաստել ռազմական կարգով: Հիշեցեք իմպերիալիստական պատերազմի ժամանակները, ինչպես ելին պատրաստում սպաներին. — արագ ելին պատրաստում: Խաղաղ ժամանակ սպաներին պատրաստում ելին յերկար տարիներ, նրանց սովորեցնում ելին դպրոցներում, իսկ զինվորական ժամանակ սպաների, յենթասպաների դպրոցներում սովորեցնում ելին միայն յերեք ամիս և նրանցից պատրաստում հրամանատարներ: Մենք սովորաբար պատգամավորուհուն սովորեցնում ենք մի տարում, իսկ այժմ ուսումնական կարգով պետք ե սովորեցնենք մի քանի ամսում:

Պատգամավորական ժողովը — դա ժեր հիմնական հենարանն է գյուղում: Պատգամավորական ժողովների միջոցով մենք ազգելու յենք կանանց մասսայի վրա:

Մենք պետք ե այժմ պատգամավորական ժողովների աշխատանքն այնպես վերակազմենք, վորպեսզի նրանցից ամեն մեկը իր դեմքը — վորպես գյուղի սոցիալիստական վերակառուցման մասնակ-

ցողի — ցույց տա և մասսաների, և կուսակցության, և խորհուրդների առաջ: Մենք այդ պետք ե անենք: Իսկ մեղ մոտ, ինչպես ցույց տվին վերընտրությունները, լինում ե այնպես, վոր գյուղը յեռում ե, աղմկում, կոլեկտիվացում ե կատարվում, հացամթերում, դասակարգային պայքարը սրվում ե, իսկ մեր պատգամավորական ժողովը չի յերկում:

Հարկավոր ե, վոր պատժողովը վոչ միայն խոսի և վորոշումներ հանի, այլ և հետեւ նրանց կիրառմանը և պատասխանատու լինի նրանց համար: Պատգամավորական ժողովներն իրենց հեղինակությունը մասսայի աչքում կկորցնեն, յեթե այս ձմեռ և մոտակա տարում իրենց ցույց չտան վորպես կազմակերպիչ ուժ գյուղում, գյուղի քաղաքական և տնտեսական կյանքին մասնակցող, յեթե իրենց ցույց չտան վորպես մարտական միավորներ, կուսակցության և խորհուրդների հետ միասին այդ բոլոր աշխատանքներին մասնակցողներ:

Մեզ հարկավոր ե, վոր պատժողովները լինեն հասարակական միավորներ, վորոնք կադրեր են պատրաստում, այնպիսի միավորներ, վորոնք կուսակցության հետ միասին մասնակցում են աշխատանքների և պատասխանատու յեն այն բոլորի համար, վոր կատարվում ե գյուղում: Յեթե այդ

վիճակին հասնենք, յեթե այդ բեկումը կատարենք, այն ժամանակ պատճողովներն իրենց ցույց կտան ձիշտ այնպես, ինչպես նրանք իրենց ցույց տվին քաղաքում արտադրության, կուլտուրայի, կենցաղի վերակազմության ասպարիզում։

## ԼԱՅՆ ԾԱՎԱԼԵՆՔ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1930 թ. ձմեռն ու գարունը կոլեկտիվացման գործում վճռական նշանակություն ունեն։ Պետք է մեր ակտիվին — գյուղխորհրդի, կոռպերացիայի կին-անդամներին, կոլխոզուհիներին, պատգամավորուհիներին, բատրակուհիներին — ոգտագործել վորպես ազիտատորների, վորպեսզի նրանց ազդեցությունը լայն մասսաների վրա ավելի շոշափելի դառնա, քան այդ յեղել ե մինչեւ այժմ։ Ուստի պետք է լայն բացատրական աշխատանք տանել կանանց շրջանում կուսակցության խնդիրների շուրջը, պետք է ծավալել մասսայական և անհատական ագիտացիան։

Աշխատանքի հիմնական ձեռ — գեղջկուհիների կոնֆերենցիաները — հնարավորություն կտա պարզաբանելու, բացարելու ամբողջ կանանց մասսային կոլեկտիվացման խնդիրների նշանակությունն ու կարևորությունը և նրանց գրավելու կուսակցության ու խորհուրդների կողմը։ Նման

կոնֆերենցիաներ մոտ ժամանակներս հարկավոր ե անցկացնել, նրանց հարմարեցնելով գարնանացանի կամպանիային։ Կոնֆերենցիայի կազմակերպման աշխատանքներին անպայման պետք է գրավել պատգամավորական ժողովները, չքավորական ժողովները, գյուղական ակտիվին և կողխողուհիներին։ Գյուղացիական մասսայական կոնֆերենցիաներն անպայման կողնեն փոխելու բոլոր այն տրամադրությունները, վորոնք դեռևս գոյություն ունեն գեղջկուհիների առանձին խմբակներում։ կոլեկտիվացման դեմ։

Այնուհետև հարկավոր կլինի գեղջկուհիներին քաշել ագրոպարագանդի կամպանիային։ Մի շարք ուայոններում, ինչպես որինակ Հյուսիսային Կովկասում, անց ե կացվելու ագրոգիտության ամիս։ Ակտիվը պետք է զբաղվի այդ գործով, գեղջկուհիների լայն մասսաներին սովորելու քաշի։

## ՊԵՏՔ ԵՆ ԱՌՈՒՅԴ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Տեղական առանձին աշխատողներ ասում են. «Դա հեշտ է յերդել, դա լավ յերգ ե աշխատանքների վերաբերյալ, բայց մենք չունենք մարդիկ, կին-կազմակերպիչներ քիչ են»։ Յես կարծում եմ, վոր այժմ այդ հարցը չե վճռականը։ Այժմ 1929 թ. վերջերին և 1930 թ. սկզբնե-

ըին կին-կազմակերպիչները չե վոր այդ հիմնական  
հարցը պետք ե վորոշեն:

Նկատի ունենալով, վոր աշխատանքը կա-  
նանց մեջ ներկա շրջանում կարևորագույն նշա-  
նակություն ե ստանում, կուսակցության կենտ-  
կոմն ասաց, վոր այդ աշխատանքը պետք  
ե կատարի կուսակցության ամբողջ  
ապարատը: Ամբողջ կոմքիչն ե պատասխա-  
նատու նրան: Խորհուրդները, կոռպերացիան պետք  
ե զգալի ուժեղացնեն այդ աշխատանքը: Այս  
ուղղությամբ բեկումն արդեն յերկում ե: Մենք  
գիտենք փաստեր, վոր կոռպերացիայի առանձին  
տեսակներ մեզ ամեն կերպ ընդառաջ են գնում:  
Բանը վոչ միայն վճարովի միավորների մեջ ե,  
վորոնց կուսակցությունը՝ կվարձատրեր, այլ  
առույգ գործիչների:

Յեթե կարողանանք բատրակուհիներից, չքա-  
վորությունից, կոլխոզուհիներից պատրաստել առ-  
ույգ գործիչներ, այն դեպքում մեզ կոդնեն՝ նրանց  
համապատասխան գործի դնել և վճարել: Որինակ,  
Հուսիսային Կովկասում այժմ յուրաքանչյուր  
մեքենա-տրակտորային կայանի կից ունեն վճա-  
րովի աշխատակից՝ համապատասխան կոռպերա-  
տիվ կենտրոնի հաշվին:

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԿԵՆՑԱՐԻ ՄԱՍԻՆ

Մենք այս ասպարիղում շատ ենք յետ մնա-  
ցել: Մեր կենցաղային ազատագրման թափը չի  
համապատասխանում սոցիալիստական շինարա-  
րության թափին: Այստեղ պետք ե շրջում, հար-  
ձակում: Հարկավոր ե կենցաղի մասին վոչ թե  
խոսքեր, այլ գործ. մսուրներ, ճաշարաններ,  
լվացքատներ, մանկապարտեզներ, մանկական  
սենյակներ, ակումբներ և այլն, — ահա սրանք  
մեզ համար ամենապլիսավորն ե: Այդ հիմնարկները  
փող արժեն: Զի կարելի հույս դնել միայն պե-  
տական բյուջեյի վրա: Յեթե մենք գյուղատն-  
տեսության կողեկտիվացման գործում հարց դնե-  
յինք, վոր մենք ամեն ինչ պետական բյուջեյի  
հաշվին ենք անելու, այն դեպքում, իհարկե, կոլ-  
խոզներում մենք վոչ մի նոր կենցաղ չեյինք  
ստեղծի, վորովհետեւ ներկա պայմաններում վոչ  
մի պետական բյուջե չեր բավականանա այդ  
նպատակի համար: Կենցաղային հիմնարկների կազ-  
մակերպմանը պետք ե գրավել հենց իրեն՝ աղ-  
գաբնակչության, գյուղական մասսայի միջոց-  
ները: Մի շարք կոլխոզներում այդ գործը դրված  
ե բոլորովին ճիշտ հիմքերի վրա:

Հարկավոր ե ստիպել Առողջապահական, Լու-  
սավորության և համապատասխան ժողկոմատնե-

ըին, կոռպերացիային իրենց յերեսները դարձնել կոլխոզները, կենցաղային հեղաշրջում անել: Թող մեկ, մեկ ու կես տարով կրծատեն ուրիշ աշխատանքներ, վորոնք, իհարկե, նույնազես կարևոր են, բայց վորոնք այսոր կարող են սպասել, իսկ կոլխոզի կենցաղը չի սպասի. հարկավոր ե այն անմիջապես կազմակերպել: Գեղջկուհիները կոլխոզ կդնան, յեթե կյանքն այնտեղ ավելի լավ ե քան անհատական տնտեսությունում: Ուստի հարկավոր ե կոլխոզի կենցաղի բարելավման հարցը վճռական դնել:

Անհրաժեշտ ե, վոր մեր ժողկոմատները, հիմնարկներն իրենց յերեսները դարձնեն դեպի կոլխոզների կենցաղային հարցերը:

#### ԱՎԵԼԻ ՇԱՏ ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵՐ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐԸ

Մի քանի խոսք ել՝ գեղջկուհիներին—  
կոլխոզուհիներին, բատրակուհիներին  
և չքավորուհիներին կուսակցության  
մեջ գրավելու մասին: Կուսակցության  
մեջ ներգրավելու, ինչպես և առաջքաշման գործը  
շատ դանդաղ ե տարփում: Կուսակցության մեջ  
կա ընդամենը 211 հազար կին, վոր կազմում ե  
13<sup>1/2</sup> տոկոս, իսկ գեղջկուհիներն այդ թվից կազմում են 8 տոկոս: Բատրակուհիները կուսակցության մեջ 2 տոկոս են կազմում::

Կուսակցության կենտկոմը պատգամավորական ժողովների մասին արված զեկուցման առթիվ ասաց, վոր պատգամավորուհիների կազմից բատրակուհիներին, չքավորուհիներին մենք շատ քիչ ենք գրավում կուսակցության մեջ, այնինչ պատգամավորուհիները կազմում են մեր հիմնական պահեստը, վորտեղից մենք կարող ենք նվիրված գործիչներ ստանալ կուսակցության համար: Հարկավոր ե պատգամավորական ժողովների կազմից գրավել կուսակցությունն ե, իսկ մենք նրանց շատ դանդաղ ենք ներգրավում:


Կոլխոզուհիների համագումարը մեզ կողնի այս գործում ևս համապատասխան բեկում կատարել: Հարկավոր ե բատրակուհիներից կազմել պատրաստել և կուսակցության մեջ գրավել ավելի արագ, քան այդ արվել ե մինչև այժմ:

#### ԿՈԼԽՈԶՆԵՐԸ ԳԵՂՋԿՈՒՀՈՒՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ ԵՆ

Կոլխոզուհիների համագումարը վճռական նշանակություն ե ունենալու կանոնց մասսաներին գեպի կոլխոզ շրջելու գործում, կոլխոզներում

կենցաղի, կուլտուրայի, աշխատանքի կազմակերպուման գործում:

Կոլխոզային այս շարժումը լիովին կազմառագրի գեղջկուհուն և նրան հնարավորություն կտա քաղաքական-հասարակական աշխատանքներում իր ուժն ու կարողությունը հանդես բերելու այն դեպքում, իհարկե, յեթե կուսակցության ղեկավարության տակ կանանց ակտիվը, վորը նույնական դրված ե վորպես այդ շարժման ղեկավար, կկարողանա միանգամից շարժումը ուղղել ճիշտ բոյլշեկյան հունի մեջ։ Մենք այժմ ունենք հարյուրավոր և հազարավոր գեղջկուհիներ, վորոնք, չնայած իրենց կենցաղային ու տնտեսական ծանր վիճակին, ակտիվ աշխատանք են տանում գյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարիզում։ Մենք պետք ե գրավենք ամբողջ մասսային։ Մենք անպայման նրան կգրավենք։ Կոլխոզուհիները հասարակական աշխատանքներում կցուցազրեն չտեսնված ուժ, լենինյան կուսակցության ղեկավարությամբ ամբողջ բանսոր դասակարգի հետ միասին կավարտեն սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում։



ՀՀ Ազգային գրադարան



56.261